# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՇՀԱՊՁԲ-10/5-7»

ք. Երևան «09» «օգոստոսի» 2017 թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊժԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Զ. Եղիազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի,

3.1.8 Չնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 31,377,698 (երեսունմեկ միլիոն երեք հարյուր յոթանասունյոթ հազար վեց հարյուր իննսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 25-ը:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 4-րդ և 5-րդ անվանատողերով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (*Հավելված N 4*) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (*Հավելված N 4.1*):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ

գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխության կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿԾ և ԶԲ վարչությունը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Արմավիրի մարզ, գ. Բամբակաշատ 14/1 փ.3 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011117034 | Հ/Հ 11500-431918819 |
| ՀՎՀՀ 02703824 | ՀՎՀՀ 04423377 |
| ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ԺՊԿ | տնօրեն |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ |

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-10/5-7 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|
| 1 | Բնական ավազ (Ավազ ջրաբերի) | Ջրաբերի ավազ 1.25մմ ֆրակցիաների, չոր լվացված, աղացրկված: |
| 2 | Սոսինձ, էմուլսիա (Սոսինձ պոլիվինիլացետատային (էմուլսիա) | Սոսինձ պոլիվինիլացետատային դիսպերսիայի հիմքով, թղթի, ստվարաթղթի, լինոլեումի, երեսպատման սալիկների, փայտե իրերի սոսնձման համար, չափածրարված պոլիմերային 5 կգ տարաների մեջ |
| 3 | Սոսինձ Սալիկի սոսինձ | Ցեմենտային հիմքով 25 կգ-անոց թղթե պարկերով, պարկերի վրա նշված լինի արտադրման ժամկետը և հանձնելու պահին մնացորդային առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ |
| 4 | Էլեկտրոդներ (Էլեկտրոդ 4 մմ) | Տրամագիծը 4 մմ, ածխածնային պողպատների զոդման համար, փոփոխական հոսանքի, 5կգ-ոց փաթեթներով, չոր, փաթեթի վրա նշված լինի արտադրման ժամկետ և առնվազն մնացորդային 1 տարվա պահպանման երաշխիքային ժամկետով |
| 5 | Էլեկտրոդներ (Էլեկտրոդ 3 մմ) | Տրամագիծը 3 մմ, ածխածնային պողպատների զոդման համար, փոփոխական հոսանքի, 5կգ-ոց փաթեթներով, չոր, փաթեթի վրա նշված լինի արտադրման ժամկետ և առնվազն մնացորդային 1 տարվա պահպանման երաշխիքային ժամկետով |
| 6 | Կահույքի փայլեցման միջոց (Կահույք մաքրելու միջոց) | Կահույք մաքրելու գել, բաղադրությունը սիլիկոն, խտացնող նյութ, ՄԱՆ, ջուր, բուրահաղորդիչ, կոնսերվանտ, օլեինաթթու: 1 լ պլաստմասսե տարաներով, Տարայի վրա նշված լինի արտադրման, հանձնելու պահին պիտանելիության առնվազն 1 տարվա ժամկետ և կիրառման եղանակ: |
| 7 | Հատակի մաքրման նյութեր (Հատակի մաքրման հեղուկ (խտանյութ)) | Բաղադրությունը՝ ՄԱՆ, ջուր, օճառ, օրգանական լուծիչներ, բուրմունք, եթերային ճարպաթթուներ: 1 լ պլաստմասսե տարաներով, տարայի վրա նշված լինի արտադրման ժամկետը և հանձնելու պահին մնացորդային առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ,պահպանման պայմաններ, կիրառման եղանակ: |
| 8 | Ապակի մաքրելու միջոց (Ապակի մաքրելու միջոց) | Բաղադրությունը 5% անիոնային ՄԱՆ, սպիրտ, լուծիչներ և գույն: Փաթեթավորումը փչող (ափրեյ) տարաներով, ոչ ավել 1լ-ից, տարայի վրա նշված լինի արտադրման, հանձնելու պահին մնացորդային պիտանելիության առնվազն 1 տարվա ժամկետ, պահպանման պայմաններ: |
| 9 | Փականներ՝ ըստ գործառույթների Ջրախառնիչ լվացարանի | Լվացարանի վրա ամրացնելու համար, մեկ բռնակով ՑԱՊ համաձուլվածքից նիկելապատ, բռնակի շարժման տիրույթը 0-90 աստիճան, երկու ճկուն խողովակներով |
| 10 | Փականներ՝ ըստ գործառույթների (Ջրախառնիչ լոգարանի) | Պատին ամրացնելու համար, մեկ բռնակով ՑԱՊ համաձուլվածք, նիկելապատ, ջրի հոսքի փականով դեպի ծորակ և ցնցուղ, ճկուն ցնցուղով |
| 11 | Ներկ, ջրաէմուլսիոն, ակրիլ (Ներկ ջրաէմուլսիոն) | Չցնդող նյութերի զանգվածային մասը՝ 47-61%, չորացած թաղանթի ծածկողականությունը՝ 80-180 գ/մ2, պլաստմասսե տարաներով 4-20 կգ զանգվածներով, համապատասխանաբար քանակի 20:80 հարաբերակցությամբ, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1647-Ն որոշմամբ հաստատված «Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգի», տարրայի վրա նշված լինի արտադրման ժամկետ և առնվազն 1 տարի պիտանելիության ժամկետ: Յուրաքանչյուր խմբաքանակի հետ ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր: |
| 12 | Ներկ՝ լատեքսային (ներկ լատեքսային) | Ներսի հարդարման համար, ծածկողականությունը՝ 6 $մ^2/լ$ , 16 կգ-ոց դույլերով, տարրայի վրա նշված լինի արտադրման ժամկետը և հանձնելու պահին մնացորդային առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ: Յուրաքանչյուր խմբաքանակի հետ ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր: |
| 13 | Ներկ՝ ճակատային (Ներկ ճակատային) | Արտաքին հարդարման աշխատանքների համար, ծածկողականությունը՝ 250-300 գ/մ2, 16 կգ-ոց մետաղական դույլերով: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1647-Ն որոշմամբ հաստատված «Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգի, տարայի վրա նշված լինի արտադրման ժամկետը և հանձնելու պահին մնացորդային առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ,պահպանման պայմաններ: Յուրաքանչյուր խմբաքանակի հետ ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ և որակի անձնագիր: |
| 14 | Սալիկ, կերամիկական, հատակի համար Սալիկ հատակի կերամիկական | Կերամիկական սալիկներ հատակի երեսպատման համար, հաստությունը ոչ պակաս 8 մմ, չափերը՝ (300x300) մմ, գույնը ըստ պահանջի |
| 15 | Խողովակների պարագաներ Անկյունակ պլ. Φ150*3.2 | Պլաստմասսե անկյունակ, արտաքին տրամագիծը 150մմ, պատի հաստությունը 3.2մմ |
| 16 | Խողովակներ (Ջրախառնիչի պղնձյա ճկուն միացում L= 450 մմ) | Մետաղական կամ պղնձյա, նիկելապատ լվացարանի համար, մեկ ծայրը D15 գլխիկը՝ ներքին պարույրով , մյուս ծայրը ջրախառնիչին միացնելու համար արտաքին պարույրով: Երկարությունը 450մմ |
| 17 | Խողովակներ (Ջրախառնիչի պղնձյա ճկուն միացում L= 600 մմ) | Մետաղական կամ պղնձյա, նիկելապատ լվացարանի համար, մեկ ծայրը D15 գլխիկը՝ ներքին պարույրով , մյուս ծայրը ջրախառնիչին միացնելու համար արտաքին պարույրով: Երկարությունը 600մմ |
| 18 | Խողովակներ (Մետաղապլաստե խողովակ, D 15) | Տրամագիծը 15 մմ, միջնապատի շերտը ֆոլգապատ, փաթեթավորումը գործարանային |
| 19 | Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Φ-50*3.2*3000 | Պոլիէթիլենային, արտաքին տրամագիծը 50մմ, պատի հաստությունը 3.2մմ, երկարությունը 3մ |

| | | |
|---|---|---|
| 20 | Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Փ-110*3.2*3000 | Պոլիէթիլենային, արտաքին տրամագիծը 110մմ, պատի հաստությունը 3.2մմ, երկարությունը 3մ |
| 21 | Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Փ-150*3.2*3000 | Պոլիէթիլենային, արտաքին տրամագիծը 150մմ, պատի հաստությունը 3.2մմ, երկարությունը 3մ |
| 22 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Փ-20) | Գույնը սև, նախատեսված D20 պոլիէթիլենային խողովակները հալեցման եղանակով միմյանց միացնելու համար, չափսը 20x20 |
| 23 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Փ-25) | Գույնը սև, նախատեսված D25 պոլիէթիլենային խողովակները հալեցման եղանակով միմյանց միացնելու համար, չափսը 25x25 |
| 24 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Փ-32) | Գույնը սև, նախատեսված D32 պոլիէթիլենային խողովակները հալեցման եղանակով միմյանց միացնելու համար, չափսը 32x32 |
| 25 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Փ-40) | Գույնը սև, նախատեսված D40 պոլիէթիլենային խողովակները հալեցման եղանակով միմյանց միացնելու համար, չափսը 40x40 |
| 26 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Փ-50) | Գույնը սև, նախատեսված D50 պոլիէթիլենային խողովակները հալեցման եղանակով միմյանց միացնելու համար, չափսը 50x50 |
| 27 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Փ-63) | Գույնը սև, նախատեսված D63 պոլիէթիլենային խողովակները հալեցման եղանակով միմյանց միացնելու համար, չափսը 63x63 |
| 28 | Կավիճ, աղացած (Կավիճ) | Փոշի, առանց գնդերի և կոշտուկների, չոր,սպիտակ, թղթե կամ սինթետիկ գործվածք 30կգ-ոց պարկերով, փաթեթի վրա նշված լինի արտադրման ժամկետ և մնացորդային առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ: |
| 29 | Մեխ (Մեխ) | Շինարարական, երկարությունը 60մմ, 80մմ, 100մմ: 60մմ չափից 100կգ, 80մմ-49կգ, 100մմ-100կգ, 120մմ-100կգ : |
| 30 | Մետաղական ցանցեր Մետաղյա ցանց բետոնի 1x3մ | Ամրալարից, տրամագիծը 4մմ, վանդակների չափսերը 15x15սմ |
| 31 | Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ (Լվացարանների հետադարձ ճկուն միացում) | Պլաստմասե, գոֆրեատիպ, D 50, իրեն սիֆոնով |
| 32 | Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ Ցնցուղի ճկուն միացում | Նախատեսված լոգարանի ջրախառնիչի համար խողովակը նիկելապատ զսպանակաձև երկու ծայրերին D15մմ ներքին պարույրով անցում: |
| 33 | Կողպեքներ (Կախովի փական)մեծ | Փականը ուղղանկյունաձև նիկելապատ 85x75x18մմ չափսի, բանալիների քանակը ոչ պակաս 3-ից: |
| 34 | Կողպեքներ (Կախովի փական)միջ | Փականը ուղղանկյունաձև նիկելապատ 80x65x18մմ չափսի, բանալիների քանակը ոչ պակաս 3-ից: |
| 35 | Պտուտակագամ Պրոֆնաստիլ ձգելու պտուտակ մետաղի | Պրոֆնաստիլը մետաղին ձգելու ցինկապատ պտուտակ, չափերը 5.5x25 |
| 36 | Պտուտակագամ Պրոֆնաստիլ ձգելու պտուտակ փայտի | Պրոֆնաստիլը փայտին ձգելու ցինկապատ պտուտակ, չափերը 4.8x35 |
| 37 | Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ Ջեռուցման մարտկոցներ Ա-600 | Մարտկոցը ալյումինե,առանցքների հեռավորությունը 600 մմ, մեկ կոմպլեկտի մեջ 10 հատ մարտկոց, իրեն խցան և օդահան փականներով, կախիչներով, մեկ մարտկոցի կշիռը 1.5կգ |

***Ծանոթություն՝*** *Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված Ապրանքները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ ԿԾ ԵՎ ՁԲ վարչության կենտրոնական պահեստ՝ ք. Երևան, Արշակունյաց 135 հասցեում՝ բացառությամբ ներքոհիշյալ դեպքի.*
*-Բնական ավազ (ավազ ջրաբերի) ապրանքատեսակի համար մատակարարը ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲՎ տրամադրում է կտրոններ չափաբաժնի քանակի չափով, որոնց առկայությամբ նյութական արժեքները հարկացվում են մատակարարի կողմից նշված հանքերից:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
/ՆՏՍ դեպարտամենտի պետի ՊԾԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ
տնօրեն

Զ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-10/5-7 պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Չ/մ | Քանակը | Մեկ միավ գին (դրամ) | Ընդհանուր գումարը (դրամ) | Մատակարարումը՝ 2017թ. III եռամսյակ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բնական ավազ (Ավազ ջրաբերի) | մ3 | 200 | 4,239.9 | 847,980 | 200 |
| 2 | Սոսինձ, էմուլսիա (Սոսինձ պոլիվինիլացետատային (էմուլսիա) | կիլոգրամ | 1,000 | 783.96 | 783,960 | 1,000 |
| 3 | Սոսինձ Սալիկի սոսինձ | կիլոգրամ | 3,000 | 54 | 162,000 | 3,000 |
| 4 | Էլեկտրոդներ (Էլեկտրոդ 4 մմ) | կիլոգրամ | 2,150 | 776.9 | 1,670,335 | 2,150 |
| 5 | Էլեկտրոդներ (Էլեկտրոդ 3 մմ) | կիլոգրամ | 1,000 | 776.97 | 776,970 | 1,000 |
| 6 | Կահույքի փայլեցման միջոց (Կահույք մաքրելու միջոց) | լիտր | 1,500 | 536.96 | 805,440 | 1,500 |
| 7 | Հատակի մաքրման նյութեր (Հատակի մաքրման հեղուկ (խտանյութ)) | լիտր | 5,000 | 231.98 | 1,159,900 | 5,000 |
| 8 | Ապակի մաքրելու միջոց (Ապակի մաքրելու միջոց) | լիտր | 2,000 | 283.98 | 567,960 | 2,000 |
| 9 | Փականներ՝ ըստ գործառույթների Ջրախառնիչ լվացարանի | հատ | 200 | 3,074.82 | 614,964 | 200 |
| 10 | Փականներ՝ ըստ գործառույթների (Ջրախառնիչ լոգարանի) | հատ | 200 | 4,986.6 | 997,320 | 200 |
| 11 | Ներկ, ջրաէմուլսիոն, ակրիլ (Ներկ ջրաէմուլսիոն) | կիլոգրամ | 25,000 | 236.99 | 5,924,750 | 25,000 |
| 12 | Ներկ՝ լատեքսային (ներկ լատեքսային) | կիլոգրամ | 25,000 | 282.98 | 7,074,500 | 25,000 |
| 13 | Ներկ՝ ճակատային (Ներկ ճակատային) | կիլոգրամ | 10,000 | 373.98 | 3,739,800 | 10,000 |
| 14 | Սալիկ, կերամիկական, հատակի համար Սալիկ հատակի կերամիկական | մ2 | 400 | 3,636.6 | 1,454,640 | 400 |
| 15 | Խողովակների պարագաներ Անկյունակ պլ. Φ150*3.2 | հատ | 50 | 1,764 | 88,200 | 50 |
| 16 | Խողովակներ (Ջրախառնիչի պղնձյա ճկուն միացում L= 450 մմ) | հատ | 100 | 675 | 67,500 | 100 |
| 17 | Խողովակներ (Ջրախառնիչի պղնձյա ճկուն միացում L= 600 մմ) | հատ | 100 | 784.8 | 78,480 | 100 |
| 18 | Խողովակներ (Մետաղապլաստե խողովակ, D 15) | մետր | 1,500 | 244.96 | 367,440 | 1,500 |
| 19 | Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Φ-50*3.2*3000 | մետր | 200 | 372 | 74,400 | 200 |
| 20 | Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Φ-110*3.2*3000 | մետր | 400 | 984 | 393,600 | 400 |
| 21 | Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Φ-150*3.2*3000 | մետր | 300 | 1,784 | 535,200 | 300 |
| 22 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-20) | հատ | 150 | 135.2 | 20,280 | 150 |
| 23 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-25) | հատ | 100 | 174.96 | 17,496 | 100 |
| 24 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-32) | հատ | 50 | 244.8 | 12,240 | 50 |
| 25 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-40) | հատ | 30 | 380 | 11,400 | 30 |
| 26 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-50) | հատ | 30 | 510 | 15,300 | 30 |
| 27 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-63) | հատ | 50 | 969.6 | 48,480 | 50 |
| 28 | Կավիճ, աղացած (Կավիճ) | կիլոգրամ | 5,000 | 87.98 | 439,900 | 5,000 |
| 29 | Մեխ (Մեխ) | կիլոգրամ | 350 | 447.7 | 156,695 | 350 |
| 30 | Մետաղական ցանցեր Մետաղյա ցանց բետոնի 1x3մ | մ2 | 135 | 846.8 | 114,318 | 135 |
| 31 | Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ (Լվացարանների հետադարձ ճկուն միացում) | հատ | 200 | 1,347.6 | 269,520 | 200 |
| 32 | Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ Ցնցուղի ճկուն միացում | հատ | 50 | 936 | 46,800 | 50 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 33 | Կողպեքներ (Կախովի փական)մեծ | հատ | 500 | 1,084.8 | 542,400 | 500 |
| 34 | Կողպեքներ (Կախովի փական)միջ | հատ | 500 | 849.6 | 424,800 | 500 |
| 35 | Պտուտակազամ Պրոֆնաստիլ ձգելու պտուտակ մետաղի | հատ | 5,000 | 9.69 | 48,450 | 5,000 |
| 36 | Պտուտակազամ Պրոֆնաստիլ ձգելու պտուտակ փայտի | հատ | 8,000 | 9.79 | 78,320 | 8,000 |
| 37 | Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներՋեռուցման մարտկոցներ Ա-600 | հատ | 200 | 4,729.8 | 945,960 | 200 |
| | Ընդամենը | | | | 31,377,698 | |

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-10/5-7 պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., այդ թվում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25.12.17թ |
| 1 | Բնական ավազ (Ավազ ջրաբերի) | 14211100/1/4/11 | 847,980 | 847,980 | 847,980 | 847,980 | 847,980 |
| 2 | Սոսինձ, էմուլսիա (Սոսինձ պոլիվինիլացետատային (էմուլսիա) | 24911200/2/4/3 | 783,960 | 783,960 | 783,960 | 783,960 | 783,960 |
| 3 | Սոսինձ Սալիկի սոսինձ | 24911400/2/4/3 | 162,000 | 162,000 | 162,000 | 162,000 | 162,000 |
| 4 | Էլեկտրոդներ (էլեկտրոդ 4 մմ) | 31711160/2/4/3 | 1,670,335 | 1,670,335 | 1,670,335 | 1,670,335 | 1,670,335 |
| 5 | Էլեկտրոդներ (էլեկտրոդ 3 մմ) | 31711160/3/4/3 | 776,970 | 776,970 | 776,970 | 776,970 | 776,970 |
| 6 | Կահույքի փայլեցման միջոց (Կահույք մաքրելու միջոց) | 39812410/1/4/6 | 805,440 | 805,440 | 805,440 | 805,440 | 805,440 |
| 7 | Հատակի մաքրման նյութեր (Հատակի մաքրման հեղուկ (խտանյութ)) | 39831273/1/4/6 | 1,159,900 | 1,159,900 | 1,159,900 | 1,159,900 | 1,159,900 |
| 8 | Ապակի մաքրելու միջոց (Ապակի մաքրելու միջոց) | 39831280/1/4/6 | 567,960 | 567,960 | 567,960 | 567,960 | 567,960 |
| 9 | Փականներ՝ ըստ գործառույթների Ջրախառնիչ լվացարանի | 42131100/1/4/2 | 614,964 | 614,964 | 614,964 | 614,964 | 614,964 |
| 10 | Փականներ՝ ըստ գործառույթների (Ջրախառնիչ լոգարանի) | 42131100/2/4/2 | 997,320 | 997,320 | 997,320 | 997,320 | 997,320 |
| 11 | Ներկ, ջրաէմուլսիոն, ակրիլ (Ներկ ջրաէմուլսիոն) | 44111411/2/4/3 | 5,924,750 | 5,924,750 | 5,924,750 | 5,924,750 | 5,924,750 |
| 12 | Ներկ՝ լատեքսային (ներկ լատեքսային) | 44111414/1/4/3 | 7,074,500 | 7,074,500 | 7,074,500 | 7,074,500 | 7,074,500 |
| 13 | Ներկ՝ ճակատային (Ներկ ճակատային) | 44111416/1/4/3 | 3,739,800 | 3,739,800 | 3,739,800 | 3,739,800 | 3,739,800 |
| 14 | Սալիկ, կերամիկական, հատակի համար Սալիկ հատակի կերամիկական | 44111710/1/4/10 | 1,454,640 | 1,454,640 | 1,454,640 | 1,454,640 | 1,454,640 |
| 15 | Խողովակների պարագաներ Անկյունակ պլ. Φ150*3.2 | 44161230/9/4/2 | 88,200 | 88,200 | 88,200 | 88,200 | 88,200 |
| 16 | Խողովակներ (Ջրախառնիչի պղնձյա ճկուն միացում L= 450 մմ) | 44163100/24/4/2 | 67,500 | 67,500 | 67,500 | 67,500 | 67,500 |
| 17 | Խողովակներ (Ջրախառնիչի պղնձյա ճկուն միացում L= 600 մմ) | 44163100/25/4/2 | 78,480 | 78,480 | 78,480 | 78,480 | 78,480 |
| 18 | Խողովակներ (Մետաղապլաստե խողովակ, D 15) | 44163100/7/4/9 | 367,440 | 367,440 | 367,440 | 367,440 | 367,440 |
| 19 | Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Φ-50*3.2*3000 | 44163130/2/4/9 | 74,400 | 74,400 | 74,400 | 74,400 | 74,400 |
| 20 | Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Φ-110*3.2*3000 | 44163130/4/4/9 | 393,600 | 393,600 | 393,600 | 393,600 | 393,600 |
| 21 | Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Φ-150*3.2*3000 | 44163130/5/4/9 | 535,200 | 535,200 | 535,200 | 535,200 | 535,200 |
| 22 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-20) | 44163200/6/4/2 | 20,280 | 20,280 | 20,280 | 20,280 | 20,280 |
| 23 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-25) | 44163200/7/4/2 | 17,496 | 17,496 | 17,496 | 17,496 | 17,496 |
| 24 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-32) | 44163200/8/4/2 | 12,240 | 12,240 | 12,240 | 12,240 | 12,240 |
| 25 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-40) | 44163200/9/4/2 | 11,400 | 11,400 | 11,400 | 11,400 | 11,400 |
| 26 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-50) | 44163200/10/4/2 | 15,300 | 15,300 | 15,300 | 15,300 | 15,300 |
| 27 | Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային Φ-63) | 44163200/11/4/2 | 48,480 | 48,480 | 48,480 | 48,480 | 48,480 |
| 28 | Կավիճ, աղացած (Կավիճ) | 44192500/1/4/3 | 439,900 | 439,900 | 439,900 | 439,900 | 439,900 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 29 | Մեխ (Մեխ) | 44192600/2/4/3 | 156,695 | 156,695 | 156,695 | 156,695 | 156,695 |
| 30 | Մետաղական ցանցեր Մետաղյա ցանց բետոնի 1x3մ | 44311130/3/4/10 | 114,318 | 114,318 | 114,318 | 114,318 | 114,318 |
| 31 | Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ (Լվացարանների հետադարձ ճկուն միացում) | 44423680/5/4/2 | 269,520 | 269,520 | 269,520 | 269,520 | 269,520 |
| 32 | Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ Ցնցուղի ճկուն միացում | 44423680/10/4/2 | 46,800 | 46,800 | 46,800 | 46,800 | 46,800 |
| 33 | Կողպեքներ (Կախովի փական)մեծ | 44521170/1/4/2 | 542,400 | 542,400 | 542,400 | 542,400 | 542,400 |
| 34 | Կողպեքներ (Կախովի փական)միջ | 44521170/2/4/2 | 424,800 | 424,800 | 424,800 | 424,800 | 424,800 |
| 35 | Պտուտակազամ Պրոֆնաստիլ ձգելու պտուտակ մետաղի | 44531130/1/4/2 | 48,450 | 48,450 | 48,450 | 48,450 | 48,450 |
| 36 | Պտուտակազամ Պրոֆնաստիլ ձգելու պտուտակ փայտի | 44531130/2/4/2 | 78,320 | 78,320 | 78,320 | 78,320 | 78,320 |
| 37 | Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ Ջեռուցման մարտկոցներ Ա-600 | 44621110/1/4/2 | 945,960 | 945,960 | 945,960 | 945,960 | 945,960 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարության

/ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն

Ձ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-10/5-7 պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ___________________ | ___________________ |
| ___________________ | ___________________ |
| գտնվելու վայրը ___________ | գտնվելու վայրը ___________ |
| հհ ___________________ | հհ ___________________ |
| ___________________ | ___________________ |
| հվհհ ___________________ | հվհհ ___________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

___________________________________________________________________________

___________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ___________________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_______________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ___________________ | ___________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ___________________ | ___________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-10/5-7 պայմանագրի

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ------------------------------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------------------------------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ------------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն